# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԱԼՎԱՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

**2023-2028թթ.**

Տնօրենի պաշտոնի հավակնորդ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԱԽԱԲԱՆ (ՄԵՐ ՄԱՍԻՆ) ____________________________________________________ 3

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ _______ 5

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ __________________________ 8

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ_____________14

4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ __________ 16

5. ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ ________________________________________ 22

6. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ___ 23

7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ___________________________________ 24

8. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ ___________________________________ 26

9. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ _____ 28

ՆԱԽԱԲԱՆ

## *Մեր մասին*

Սալվարդ գյուղը Սիսիան խոշորացված համայնքի 36 բնակավայրերից մեկն է՝ լեռնային (1960 մ), սահմանամերձ Նախիջևանին (միջին հեռավորությունը՝ 6 կմ): 1949 թվականից Սալվարդ գյուղում գործել է 7-ամյա դպրոց: 1992 թվականին դպրոցի շենքը քանդել են (տեղափոխելով «Ուխտասար» գյուղացիական կոլեկտիվ տնտեսության վարչական շենքի մի հատվածը) նորը կառուցելու նպատակով:

Հայտնի պատճառներով (ԽՍՀՄ-ի փլուզում, Ղարաբաղյան շարժում, շրջափակում) դպրոցի նոր շենքը չի կառուցվել և դպրոցը առ այսօր տեղակայված է (ժամանակավոր անհատույց կերպով) «Ուխտասար» ԳԿՏ-ի սեփականությունը հանդիսացող վարչական շենքի մի զգալի հատվածում:



Գյուղի միակ ուսումնական հաստատությունն է, իսկ մոտակա դպրոցը հեռու է բնակավարից մոտ 4 կմ: Չունենալով սեփական շենք՝ դպրոցը չի կարողացել ձեռք բերել լիցենզիա: Շենքը երկհարկանի է, հարմարեցված, առկա են 6 դասասենյակ, 1 ուսուցչանոց, 1 տնօրենի առանձնասենյակ (անհրա-ժեշտության դեպքում՝ որպես դասասենյակ), 1 ճաշարան (ՊՀԾ-ի և դպրոցի միջոցներով վերակառուցված), 1 օժանդակ սենյակ (վառելափայտի պահեստավորման համար): Շենքի մյուս հատվածը (4 սենյակ) օգտագործվում է գյուղապետարանի կողմից: Ի սկզբանե շենքը սանհանգույց և ջրահեռացման համակարգ չի ունեցել, ջեռուցումը՝ փայտե վառարաններով, ջրամատակարարումը՝ հարևան տներից՝ ինքնահոս ջրագծով, ջրահեռացումը՝ ինքնաշեն դեպի մոտակա կոյուղագիծը, սանհանգույցը՝ շենքից 10 մետր հեռու (կառուցված Վորլդ Վիժն կազմակերպության կողմից և նորոգված՝ դպրոցի միջոցներով):

Արդեն գրադարանը, լաբորատորիան և արհեստանոցը՝ շենքից 200 մետր հեռու գտնվող առանձին շինությունում է գտնվում, որին կից գործում է մարզահրապարակը (220 մ$^2$)։

Անհրաժեշտության դեպքում (միջոցառումներ) օգտագործում է նաև նիստերի դահլիճը։

Մեր կարգախոսն է.

*Անձնական օրինակն ավելի է ներգործում, քան քարոզը։*



# ՍԱԼՎԱՐԴԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| 1.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ | |
| Դպրոցը միակն է գյուղում:<br>Դպրոցի դասասենյակների մեծ մասը նորոգված և կահավորված է (եվրո):<br>Մեկ աշակերտին բաժին է ընկնում 1.5 մ$^2$ տարածք:<br>Մարզահրապարակը (220մ$^2$) ցանկապատված է: Գործում է որպես վոլեյբոլի և բասկետբոլի դաշտեր:<br>Սանհանգույցները վերանորոգված են, սակայն գտնվում են շենքից դուրս (10 մ):<br>Ճաշարանը նորոգված է և ունի անհրաժեշտ սարքավորումներ և սպասք:<br>Դպրոցի շենքը (տրամադրված ժամանակավոր անհատույց) երկհարկանի է  կառուցված 1975թ., մոնոլիտ կրող կոնստրուկցիայով և բազալտե քարի շարվածքով, սեյսմակայուն է (8-9 բալ):<br>Պարբերաբար կատարվել են արտաքին և ներքին հարդարման աշխատնքներ: Ունի նիստերի դահլիճ, որը ԳՊ-ի հետ համատեղ օգտագործվում է: | Դպրոցը չունի սեփական շենք և մարզադահլիճ:<br>Դասասենյակները հարմարեցված են:<br>Ջեռուցումը փայտե վառարաններով է իրականացվում, սակայն ջերմաստիճանը (18-20) $^0$C պահպանվում է:<br>Լաբորատորիան և արհեստանոցը գտնվում են շենքից դուրս (200 մ), նորոգված չեն և չունեն համապատասխան կահույք, գույք և պարագաներ:<br>Շենքը համապատասխանեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին:<br>Գրադարանը գտնվում է դպրոցից դուրս՝ (200 մ) և չի ջեռուցվում:<br>Շենքի ծածկը պանելային է, չնայած ունի ջերմամեկուսիչ շերտ, կտուրը՝ ազբոշիֆերով է իրականացված:<br>Որոշ դասասենյակների լուսավորվածությունը բավարար չէ դասապրոցեսի անցկացման համար:<br>Դպրոցը չունի առանձնացված պահակակետ, քանի որ ԳՊ-ի հետ համատեղ է օգտագործվում: |
| 1.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ | |

| | |
|---|---|
| Դպրոցը ունի պրոյեկտոր, որը պարբերաբար օգտագործում է միջոցառումներին և երբեմն նաև դասապրոցեսների ժամանակ։<br>Ունի բավարար չափով համակարգիչներ (թվով՝ 6 նոր սերնդի)՝ օպերատորի, հաշվապահի և ուսուցիչների աշխատանքի կազմակերպման համար<br>Մարզահրապարակը կահավորված է, ունի թռիչքուղի, պտտաձող։ Օգտագործվում է որպես վոլեյբոլի և բասկետբոլի դաշտեր։<br>Դպրոցում կա ՏՈՋ-8 հրացան, որը անհրաժեշտության դեպքում օգտագործվում է ՆԶՊ դասաժամերին (թիրախային կրակոցներ մեկուսի տարածքում)։<br>Շախմատի սենյակը ունի անհրաժեշտ գույք և պարագաներ, որոնք ձեռք են բերվել վ/վ-ի և դպրոցի միջոցներով։<br>Դասասենյակները ունեն անհրաժեշտ նոր գույք (սեղան, աթոռ, գրատախտակ)<br>Դպրոցը ունի հակահրդեհային պարագաներ և միջոցներ, որոնք վահանակի հրդեհաշիջման ջրի առկայությամբ կլինեն պրակտիկ և ուսանելի։<br>Ճաշարանը ունի էլեկտրական սարքեր, սպասք, տաք և սառը ջուր, նաև ծնողների կողմից կամավոր աջակցութամբ (խնձոր, կարտոֆիլ, լոբի, պանիր), որը երում է սննդի գումարի տնտեսմանը։ | Դպրոցի համակարգչային սենյակը թերիազեցած է (1 համակարգիչ), որը բավարար չէ լիարժեք դասի համար։<br>Դպրոցը չունի տեսահսկման սարքեր, որը թույլ կտար դյուրին կերպով վերահսկել իրավիճակը։<br>Մարզահրապարակը տարվա ընթացում լիարժեք գործում է 4-5 ամիս, այն հանգեցնում է դասի ոչ լիարժեք իրականացմանը։<br>Լաբորատորիան չունի համապատասխան պարագաներ և նյութեր, որոնք գործնական աշխատանքները դարձնում են արդյունավետ։<br>Արհեստանոցում չկան համապատասխան մեքենա սարքավորումներ։ Միայն գործքիներով հնարավոր չէ կիրառելի հմտություն ձեռք բերել։<br>Դպրոցը չունի հակահրդեհային վահանակ, քանի որ շենքի համատեղ օգտագործման դեպքում վերահսկումը պակաս արդյունավետ է դառնում։<br>Առարկայական կաբինետները չունեն համապատասխան կահավորում։<br>Դասասենյակների սակավությունը և տնօրինության մոտիվացիայի պակասը բերել է ներկա իրավիճակին։<br>Կա դիդակտիկ պարագաների և նյութերի պակաս։ Հները գործածական չեն, նեորերն էլ քիչ են ձեռք բերվել։ |

| 1.3 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ | |
|---|---|
| Դպրոցի կառավարման մարմիններն են՝<br>- հիմնախնդիրը<br>- ԿԳՄՍՆ և լիազոր մարմինը<br>- տնօրենը<br>- միացյալ խորհուրդը<br>Դպրոցը ունի կոլեգիալ կառավարման մարմին՝ միացյալ խորհուրդ (Սալվարդի հ/դ, Թասիկի հ/դ, Արևիսի հ/դ – ընդհանուր 19 անդամ): Իրականացնում է ընթացիկ վերահսկողություն: | |
| Խորհրդի անդամների քանակի շատ լինելը նպաստում է վերահսկողության բարձրացմանը, քանի որ տնօրենի հաշվետվությունը լսելի է դառնում նաև մյուս 2 դպրոցների համար:<br>Տարին առնվազն 2 անգամ տեղի են ունենում մանկավարժական խորհրդի նիստեր, որտեղ քննարկվում են միջնաժամկետ ծրագրի կատարողականը և տարիֆիկացիոն ցուցակը և հաստիքների տեղեկագիրը<br>Դպրոցի եռամսյակային հաշվետվությունները, տարեկան նախահաշիվը քննարկվում, իսկ բյուջեի նախագիծը լրամշակվում է խորհրդի կողմից:<br>Խորհրդի վերահսկումը տնօրենի գործունեությունըդարձնում է ավելի արդյունավետ թափանցիկ (հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայք էջում և ամրակցվում հայտերի անկյունում): | Դպրոցը չունենալով որևէ տեսակի շահույթ կամ լրացուցիչ գումար չի համագործակցում որևէ միացյալ խորհրդի հետ:<br>Տնօրենի ընտրության (նշանակման) կարգի փոփոխությունը բերել է միացյալ խորհրդի ակտիվության (համագործակցության) նվազեցմանը:<br>Միացյալ խորհրդի առնվազն 8 անդամ ակտիվ չեն լինում, քանի որ քննարկվող հարցը իրենց դպրոցին չի վերաբերվում:<br>Խորհրդի նիստերը տեղի են ունենում հիմնականում դպրոցում: |
| 1.4 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ | |

| | |
|---|---|
| Հաստատությունը Սիսիան խոշորացված համայնքի մոտ 40 դպրոցներից մեկն է հանդիսանում և հնարավորության դեպքում (ըստ միջոցառման բնութագրիչների) մասնակցում է համայնքում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին (կամ հրավիրված կամ մասնակից):<br>Դպրոց – ընտանիք կապը առավել սերտ է Սալվարդ փոքր բնակավայրում (նաև դասղեկների միջոցով), (ծնողական ժողովներ - տարեկան առնվազն 4անգամ, ծնողների ակտիվ մասնակցություն դպրոցական միջոցառումներին):<br>Ուսուցիչ – աշակերտ ակտիվ համագործակցություն (անանուն մոնիթորինգ)<br>Դպրոցի ընդհանուր կառավարումը իրականացնում է լիազորված մարմինը՝ առաջնորդվելով ԿԳՄՍՆ որոշումներով և հավելվածներով:<br>Շրջաբերականների և աուդիտորի ընտրությամբ լիազորված մարմինը դպրոցը պահում է իր մշտադիտարկման հորիզոնում:<br>Կա սերտ համագործակցություն Այբ կրթական հիմնադրամի հետ (մշտական մասնակցություն «Մեղու» և «Կենգուրու» մրցույթներին): | Համայնքապետարանը ունենալով սահմանափակ իրավունքներ՝ դպրոցի կառավարման գործում՝ կատարում է ավելի շատ խորհրդատվական գործառույթ, քան կառավարման:<br>Դպրոցի ոչ բարձր ուսման որակը (նաև մասնագետ ուսուցիչների պակասի պատճառով) տարաբնույթ խմբակների, թատրոնի, համերգների բացակայությունը ծնողներին չի մոտիվացնում, ապրելով գյուղում իրենց երեխաներին ուղղորդել տեղի դպրոց:<br>Դպրոցի շրջանավարտների հետ համագործակցության պակաս:<br>Լիազորված մարմնի հետ անհրաժեշտ առկա շփումը (տարիֆիկացիայի հաստատում, հանդիպում մարզպետի հետ) բերում է լրացուցիչ ծախսերի:<br>Անցումը հեռավար շփման թույլ կտա խուսափել գործուղման ծախսերից:<br>Դպրոցը մարզպետարանից գտնվում է ավելի քան 130 կմ հեռավորությամբ, այնինչ տարեկան 4-6 առկա հանդիպում է իրականացվում:<br>Համագործակցությունը  վ/վ Հ-Հ միջ. կազմակերպության հետ դադարել է վերջինիս ֆինանսավորման կրճատման պատճառով:<br>«Այբ» հիմնադրամի պարբերականի, ինչպես նաև «Կրթության» թերթի բաժանորդագրությունների չիրականացում (դպրոցի բյուջեի սուղ միջոցների պատճառով): |

| | |
|---|---|
| Կա համագործակցություն վերապատրաստող և ատեստավորող (ուսուցիչների հերթական ատեստավորում) կազմակերպությունների հետ «Ինտերակտիվ կրթության զարգացման հիմնադրամ», Սիսիանի «Ավագ դպրոց»: «Հարմոնիա» կազմակերպությունը ապահովում է ինտերնետ կապ: Կա համագործակցություն «Կրթություն» թերթի խմբագրության հետ՝ ուսուցչի թափուր տեղի մրցույթի հայտարարության տեսքով (տարեկան առնվազն 2 անգամ): Աշխատաքներ են տարվում երակարօրյա խմբերի ձևավորման և արտադպրոցական դաստիարակության կազմակերպաման գործում: | Տարբեր հասարակական կազմակերպությունների մոտիվացիայի պակաս հեռավոր շրջաններ այցելելու համար: Մենթոր դպրոցներ և «Դասավանդիր Հայաստան» կազմակերպությունների հետ չհամագործակցելու պատճառը աշակերտների և դասաժամերի քիչ լինելն է, քանի որ 1 դասաժամը վարձատրվում է 0,25-ի չափով, եթե դասարանում սովորում է 1 աշակերտ: |

## 1.5 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

| | |
|---|---|
| Ուսուցիչների մի մասը դասապրոցեսին կիրառում է նոր տեխնոլոգիաներ (պրոյեկտոր):<br>Բազմավաստակ ուսուցչի բարեխիղճ աշխատանքի պատրաստակամություն<br>Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի առկայություն<br>Ուսուցիչների փոխհամագործակցություն (սկսնակ ուսուցիչներին օգնություն փոխդասալսումների միջոցով):<br>Բաց դասերի կիրառումով երևում է դասի արդյունավետությունը:<br>Պետական նոր չափորոշիչների կիրառման նպատակով 2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում դասավանդող ուսուցիչները անցնում են վերապատրաստում: | Ուսուցչի խրախուսման սահմանափակ հնարավորություններ (դպրոցի սուղ միջոցներ):<br>ՏՀՏ – ի կիրառման քիչ հնարավորություններ (SMART գրատախտակի բացակայություն, մեդիագրագիտություններիպակաս):<br>Կահավորված առարկայական դասասենյակների գործող լաբարատորիայի բացակայություն<br>Որոշ առարկաների մասնագետ ուսուցիչների բացակայություն (պատմություն, ֆիզկուլտուրա, ռուսաց լեզու և այլն)<br>Որակավորման բարձրացմանն ուղղված միջոցառումներին մասնակցելու մոտիվացիայի պակաս (ծրագրային նյութերի անհամապատասխանություն) |

Սալվարդի հիմնական դպրոցի մանկավարժական համակազմ

| N | Անուն ազգանուն հայրանուն | Պաշտոն | Ծննդյան տարեթիվ | Կրթություն | Որակավորում | Երբ է ատեստավորվել |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Անդրանիկ Իվանյան Մենիկի | Տնօրեն աշխարհագրության ուսուցիչ | 1968թ. | Բարձրագույն | Աշխարհագրության ուսուցիչ | 2018թ.<br>հայտը՝ 2023թ. |
| 2 | Կարինե Աբելյան Ռուբիկի | Դասվար | 1968թ. | մ/մ | Դասվար | 2022թ. |
| 3 | Մարետա Թոխունց Համբարձումի | Դասվար | 1953թ. | մ/մ | Դասվար | 2021թ. |
| 4 | Մետաքսյա Մեսրոպյան Սերյոժայի | Մաթ. ուսուցիչ/ գրադարանավար | 1963թ. | Բարձրագույն | Կիբեռնետիկ | 2022թ |
| 5 | Մերրի Հակոբյան Գերասիմի | Քիմիայի ուսուցիչ/ԴԱԿ | 1993թ. | Բարձրագույն | Քիմիայի ուսուցիչ | 2021թ. |
| 6 | Լիանա | Անգլերենի | 1977թ. | Բարձրագո | Անգլերենի | 2018թ.,<br>հայտը՝ 2023թ. |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Պետրոսյա ն Լեռնիկի | ուսուցիչ | | ւյն | ուսուցիչ | |
| 7 | Աննա Պողոսյան Ջիվանի | Ռուսաց լեզվի ուսուցիչ | 1988թ. | մ/մ | Ռուսաց լեզվի ուսուցիչ | Չունի համապատաս խան որակավորում |
| 8 | Զորո Փանյան Մեյրանի | Զինղեկ ՆԶՊ ուսուցիչ | 1984թ. | Բարձրագո ւյն | Բաց հանքերի շահագործում | Չունի համապատաս խան որակավորում |
| 9 | Նելլի Իվանյան Բենիամին ի | Ուսուցչի օգնական | 1982թ. | Բարձրագո ւյն | Հայոց լեզվի, գրականության ուսուցիչ | - |

| 1.6 ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ | |
|---|---|
| Որոշակի հագեցվածություն ՏՀՏ – ի անհրաժեշտ սարքավորումներով:<br>Ինտերնետ կապի առկայությամբ նախատեսվող խմբակները և նախագծային աշխատանքները (7-9-րդ դաս.) նոր լիցք կհաղորդեն կրթական գործին:<br>Դասապրոցեսը վարվում է անհատական մոտեցմամբ կիրառվում են փոխներգործություն աշակերտակենտրոն դասավանդման մեթոդներ:<br>Փորձեր են արվում նախագծային աշխատանքներ կատարելու ուղղությամբ:<br>Ուսուցչի մոտ առկա է մոտիվացիա, որ հենց իր դասավանդած առարկայից աշակերտները կընտրեն թեմաներ, քանի որ թեմայից հատկացվող ժամերը տարիֆիկացվում են: | Դյուրակիր համակարգիչների պակասի դեպքում ձգտում ենք եղածը արդյունավետ օգտագործել:<br>Տարակարգ ունեցող կամ կամավոր ատեստավորված ուսուցիչներ չկան, քանի որ հիմնական դպրոցի ուսուցիչը պետք է ավագ դպրոցի ծրագիրը յուրացնի:<br>Երիտասարդ մասնագետ ուսուցիչների ներգրավման մոտիվացիայի պակաս (լեռնային սահմանամերձ գյուղում չկա ոչ մի արտոնություն):<br>Երկհամակազմ դասարանների դեպքում մինչև այժմ ուսուցիչը վարձատրվում է մոտ 50 % - ի չափով:<br>Նոր չափորոշիչներով նախատեսվում է բազմահամակազմ դասարաններ չկազմակերպել:<br>Այդ պարագայում շենքային պայմանների բարելավումը (դասասենյակների ավելացում) կիրականացվի համայնքապետարանի գործուն աջակցությամբ: |

Սյունիքի մարզում նախատեսվում է տեղակայել 50 Արմաթ լաբորատորիաներ։
Դպրոցը հայտ է ներկայացրել Արմաթ լաբորատորիայի ներդրման համար։ Հայտը չմերժվելու դեպքում կունենանք ՏՀՏ նոր սարքավորումներ, որոնք գործարկելով՝ վերապատրաստված մասնագետը կմոտիվացնի աշակերտներին դեպի նոր զարգացում ապահովող գիտամանկավարժական նորարարության ներդրմանը։

| 1.7 ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ | |
|---|---|
| Կրթության որակի գնահատումը դա սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը բնութագրող վերջնարդյունք է, ըստ ձեռք բերված գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների և արժեքների ձևավորման չափորոշչային պահանջներին համապատասխան։<br>Գնահատումը իրականացվում է 2 ձևով՝ միավորային և ուսուցանող։<br>Դպրոցը նախատեսում է ուսուցանող գնահատումը իրականացնել (մինչև 5-րդ դասարանի II կիսամյակ) բնութագրման միջոցով, իսկ միավորային գնահատումը՝ 9-րդ դասարանը ներառյալ։<br>Գնահատումը իրականացվում է 2 եղանակով՝ ընթացիկ (բանավոր, թեստ, գործնական, նախագծային աշխատանք) և ամփոփիչ (ըստ կիսամյակների արդյունքի՝ ըստ տարեկան, ըստ կրթական աստիճանների՝ գիտելիքների ստուգում և ամփոփիչ ատեստավորում)։ | Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ ելնելով ծանրաբեռնվածությունից հազվադեպ է հեռավոր դպրոցներում իրականացնում արտաքին գնահատում։<br>Դպրոցը յուրաքանչյուր ուս. տարվա ավարտին իրականացնում է ներքին գնահատում, որը համակողմանի բնութագրում է կրթական գործընթացի փաստացի վիճակը։<br>Ներքին գնահատման տվյալները տեղակայվում են դպրոցի կայք էջում։<br>Կրթության որաի վերլուծության ամենաականառու ցուցանիշը՝ դպրոցների վարկանշային ցուցակում գրաված տեղն է (ըստ կրթական աստիճանի)։ Այն խթան կհանդիսանա կրթության որակի բարելավմանը, քանի որ և՛ չափելի է, և՛ համադրելի ուսման որակի դինմիկան։ |

| | |
|---|---|
| ԿԱՊԿՈՒ աշակերտների գնահատումը իրականացվում է ըստ ԱՌԻՊ-ի՝ 10 միավորանոց սանդղակով:<br>Կրթության որակը դպրոցում գնահատվում է հետևյալ չափանիշներով՝<br>1. Ուսումնական գործընթացի առկա վիճակը (աշակերտի կարիքին համապատասխան ուսուցման կազմակերպում):<br>2. Կրթական գործընթացի կատարողականը (մանկավարժական և վարչատնտեսական աշխատակիցների աշխատանքի կազմակերպման պլանավորված հստակ մեխանիզմի առկայություն):<br>3. Կրթական գործընթացի արդյունավետությունը (հասարակական կարիքներին համապատասխան կրթության բոլոր մասնակիցների սերտ փոխգործակցություն):<br>4. Ուսումնադաստիարակչական միջոցառումների որակը (դպրոցական միջոցառումների, խմբակների, նախագծերի իրականացում և կարգապահության արմատավորում): | |

| Ցուցանիշ | 2019-2020 ուսատրի | | 2020-2021 ուստարի | | 2021-2022 ուստարի | |
|---|---|---|---|---|---|---|
| | 1-ից 4-րդ դաս. | 5-ից 9-րդ դաս. | 1-ից 4-րդ դաս. | 5-ից 9-րդ դաս. | 1-ից 4-րդ դաս. | 0/0 % |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը | 25% | 0% | 1/10% | 0/0% | 1/12, 5% | 2/33 % |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ | 75% | 100% | 9/90% | 7/100% | 0/0% | 100 % |
| Ավարտման գործակից | 100% | 100% | 100% | 100% | 100 % | 0/0 % |

## Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 2 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

| 1.8 ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿՍԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ | |
|---|---|
| Դպրոցում նախատեսվող խմբակները (առողջ ապրելակերպ մասնագիտական կողմնորոշման) կնպաստեն աշակերտների սոցիալականացման և ինքնուրույն կյանքի նախապատրաստման համար: Նախագծային աշխատանքի ներդնումը կնպաստի աշակերտների համար բազմակարծիք, մասնակցային միջավայրի ձևավորմանը: Դպրոցում ձևավորված է բարոյահոգեբանական արժեքային միջավայր, որտեղ կրթության մասնակիցները (ծնող, աշակերտ, մանկավարժ, կառավարման մարմին) գործում են փոխհամաձայնեցված՝ ապահովելով սովորողի իրավունքների պաշտպանության արդյունավետությունը: Գյուղի բուժքրոջ այցելությունը (ամիսը՝ առնվազն երկու անգամ) դպրոց և սովորողի ամենամյա բուժզննումը բխում է աշակերտի առողջապահական շահերի պաշտպանությունից: | Դպրոցի դասասենյակները հարմարեցված չեն ԿԱՊԿՈՒ աշակերտների կարիքների համար, քանի որ շենքը տիպային չէ (հարմարեցված): Լաբորատորիան, գրադարանը և արհեստանոցը գտնվում են մեկ այլ շենքում և գործում են մասամբ: Դպրոցի շենք ունենալու դեպքում դրանք կտեղադրվեն նույն շենքում և համապատասխան աշխատանքներից հետո կգործեն լիարժեք՝ ապահովելով նպաստավոր կրթական միջավայր: Նույնը վերաբերվում է մարզադահլիճին, որի բացակայությամբ այժմ գործում է մարզահրապարակը: Ջեռուցման պահեստի բացակայությունը նույնպես խոչընդոտ է: Պակաս կարևոր չէ մասնագետ – մանկավարժների պակասը՝ ուսումնական միջավայրը ապահովման համար: |

| 1.9 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ | |
|---|---|
| Վերջին չորս տարում մշակութային կարգով 1 ուսուցիչ է ընդունվել դպրոց, որն էլ գյուղի բնակիչներից մեկի թոռնուհին է: Դպրոցի վարչատնտեսական մասի բոլոր 10 աշխատակիցները գյուղի բնակիչներ են և նրանց 90%-ը են մեր դպրոցի աշակերտների ծնողներ, որոնք սրտացավ վերաբերմունք են ցուցաբերում իրենց վստահված աշխատանքի հանդեպ: Առկա պայմաններում դպրոցի տնօրինությունը անում է հնարավորը՝ մասնագետ մանկավարժներով դպրոցը | Դպրոցը չունի լրացուցիչ միջոցներ աշխատակազմին նյութապես խրախուսելու (լավագույն դեպքում դա արվում է ֆինանսական տարվա վերջին՝ պարգևավճարի տեսքով): Դպրոցի մանկավարժներից 4-ը երթևեկող են և ստիպված են տաքսիներով երթևեկելու, քանի որ գծային տրանսպորտ չկա: Էլ չենք խոսում ճանապարհների անմխիթար վիճակի մասին: Հանրակրթական պետական նոր չափորոշիչներով նույնպես ոչ մի արտոնություն սահմանված չէ: |

<table>
<tr><td>ապահովելու գործով:<br>Դպրոցում աշխատող երկու դասվարներն էլ միջնակարգ մասնագիտական կրթություն ունեն, տարիքով են և դժվարությամբ են համակերպվում կամավոր ատեստավորման գնալու հանգամանքի հետ:<br>Դեռ ավելին նոր ուս. տարում դպրոցը ունենալու է 4 տարրական դասարան:<br>Դասվարների խնդիրը դառնում է օրախնդիր հարց:</td><td>Մանկավարժական համալսարանում գրեթե չկան նպատակային անվճար տեղեր՝ մանկավարժական համակազմի համալրման համար:</td></tr>
<tr><td colspan="2">1.10 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ</td></tr>
<tr><td>Դպրոցը հեռու գտնվելով ոչ միայն մայրաքաղաքից (220 կմ), այլ նաև հեռու է գտնվում մարզկետրոնից (130 կմ) և խոշորացված համայնքի կենտրոնից (15 կմ) ք. Սիսիանից:<br>Առկա պայմաններում դպրոցի գերնպատակը դառնում է (եղել է, մնում է) գյուղացուն ամրացնել իր հողին ու ջրին:<br>Առկա աշխատանքային ռեսուրսների պարագայում, գյուղի ավանդույթները հաշվի առնելով, կարելի է զարգացնել դպրոցի իրատեսական ծրագիրը:</td><td>Դպրոցում ներկա դրությամբ կա 18 աշխատակից (9 մանկավարժ, 9 տեխ. աշխատող) և 14 աշակերտ:<br>Առանց թվային վերլուծության կարելի է դպրոցի աշխատանքը համարել ոչ այդքան արդյունավետ:<br>Եթե ավելացնենք, որ հայրենի կառավարության հաստատված ծրագրով ակնկալվում է մինչև 2026թ. հարևան երեք գյուղերի դպրոցները (Սալվարդ, Թասիկ, Արևիս, Հացավան) միավորել Հացավան գյուղում:<br>Այդ պարագայում գոնե մեր գյուղի 14 աշակերտների առնվազն 50 %-ը տեղափոխվելու են (ծնողների կարծիքներից ելնելով) ք. Սիսիան:<br>Արդյունքում՝ սահմանամերձ, լեռնային գյուղը աստիճանաբար դառնալու է պատմություն:</td></tr>
</table>

| | 2020թ. | 2021թ. | 2022թ. | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Բյուջե** | **21718,1** | **23309,3** | **22469,3** | | | | | |
| | | | | | | | | |
| **Ընդամենը ծախս** | **20456,4** | **22128,6** | **22469,3** | | | | | |
| այդ թվում | | | | | | | | |
| 1.Աշխատավարձ | 18971,8 | 19650,5 | 19735,5 | | | | | |
| 2.Ընթացիկ ծախս | 1076,5 | 1793,0 | 2261,5 | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3.Գույքի ձեռք բերում | 408,1 | 685,1 | 472,3 | | | | | |

| ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ |
|---|
| 1. Դպրոցի սեփական շենք (ներառյալ սպորտդահլիճ) շենք ունենալու իրական ձգտում |
| 2. Տարրական և հիմնական լիցենզիայի ձեռքբերում |
| 3. Մասնագետ ուսուցիչների պակաս |
| 4. Նյութատեխնիկական բազայի բարելավում (լաբորատորիա, ակնկալվող մարզադահլիճ, գրադարան, առարկայական կաբինետներ, ակնկալվող զենքի պահեստ, արհեստանոց) |



## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Նպատակը որոշակի ժամանակահատվածում ակնկալվող արդյունք է, խնդիրը՝ նպատակին հասնելու միջոց: Դպրոցի հաջողության գրավականը՝ *նպատակի ճիշտ ուղղության ընտրելն է…*

| N | ՆՊԱՏԱԿՆԵՐ | ԽՆԴԻՐՆԵՐ |
|---|---|---|
| 1 | Ուսումնական միջավայրի բարելավում | Դպրոցի շենքի վկայականի ձեռքբերում և նվիրատվության և նվիրատվության կարգով՝ սեփական շենքի ամրագրում՝ լիցենզիա ստանալու նպատակով |
| 2 | Դպրոցի մանկավարժական համակազմի համալրում և որակավորման բարձրացում | Մասնակցել առկա և առցանց վերապատրաստումներին: Մշտական համագործակցություն ապահովել կրթություն կազմակերպող և իրականացնող բոլոր հնարավոր կառույցների հետ |
| 3 | Ուսման արդյունավետության բարձրացում | Լաբորատորիայի և արհեստանոցի անհրաժեշտ միջոցների ձեռքբերում |
| 4 | Դաստիարակությունը՝ ուսումնառության անբաժանելի բաղադրիչ | Դպրոցի ուսումնադաստիարակչական համակարգի կատարելագործում (խմբակ, նախագծային աշխատանք, հնարավորության դեպքում՝ երկարօրյա դասընթաց) |
| 5 | Դպրոցը՝ համագործակցային կրթության միջավայր | Խորհրդակցական մարմինների ակտիվացում Դպրոց – ընտանիք – համայնք փոխգործակցության ներդաշնակության ապահովում |
| 6 | Ունենալ մրցունակ աշակերտ | Բոլոր օլիմպիադաներին, մրցույթներին, կազմակերպվող սպորտային առաջնություններին ունենալ առնվազն մասնակցություն |
| 7 | Դառնալ առաջադեմ և մասնակցային դպրոց | Բոլորի ասելիքը լսելի դարձնել և կայացնել թիմային որոշումներ: Ապահովել կապը կրթական կազմակերպությունների հետ |
| 8 | Դասապրոցեսում ՏՀՏ – ի կիրառումը՝ որպես աշակերտի մոտիվացիայի և ուսման որակի բարձրացման միջոց: | Զարգացնել ուսուցչի համակարգչային գրագիտությունը: ՏՀՏ – ի կիրառման կարողությունների ամրապնդում |
| 9 | Սովորողների առողջության պահպանում, անվտանգ կենսագործունեության | Սպորտդահլիճ ունենալը (ֆիզկուլտուրա առարկայի դրվածքի բարձրացում) և ճաշարանի լրացուցիչ ճաշացանկի ներմուծում |

| | | |
|---|---|---|
| | ապահովում | |
| 10 | Դպրոցը որպես հաշվետու և բարենպաստ միջավայր ապահովող կրթօջախ | Կառավարման մարմինների հետ սերտ աշխատանք և կարգապահության ամրապնդում |



# 3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

## 3.1. ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում սովորում են 14 աշակերտ, կոմպլեկտավորված՝ 3 դասարաններում։ Դպրոցի աշխատակիցների թիվը՝ 19, որից 9-ը՝ մանկավարժ (8 ուսուցիչ, 1 ուսուցչի օգնական), 10-ը՝ ուսումնաօժանդակ անձնակազմ (3-ը՝ 1 դրույք, 7-ը՝ 0,5 դրույք հաստիքով աշխատողներ)։

Դպրոցը չունի նախակրթարան, այնինչ 0-6 տարեկան երեխաների թիվը՝ 16 է։ Աշխատանքներ են տարվում շենքի վկայականի ձեռք բերման և նվիրատվության կարգով այն դպրոցին հատկացնելու ուղղությամբ։ Հետո միայն տարրական և հիմնական կրթության լիցենզիան կդառնա իրական…

Դպրոցի ընթացիկ ղեկավարումը իրականացվում է տնօրենի կողմից՝ ՄՄ նախագահների օժանդակությամբ, քանի որ տնօրենի տեղակալներ հաստիքացուցակով չկան։ Նոր Չափորոշիչով տնտեսական մասի համակարգողը կհանդիսանա երկրորդ վարչական ղեկավարը (տնօրենը)։
Ծնողների հետ աշխատանքը իրականացվում է դասվար-դասղեկների միջոցով։ Ուսումնադաստիարակչական աշխատանքների կառավարմանը նպաստում են (բացի մանկավարժներից) նաև ուսումնաօժանդակ մասի աշխատակիցները՝ համակարգողի պատասխանատվությամբ։ Դպրոցը գործում է իր հնարավորությունների սահմանում՝ առաջնորդվելով ՀՊՉ-ի դրույթներով և պահանջներով։
Չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրահիմնված մոտեցումից՝ սահմանելով կրթական աստիճանների համար ակնկալվող վերջնարդյունքներ։ Սովորողի կարողունակությունների ձեռքբերումը՝ դպրոցի միջոցով իրականացվող պետության պատվերն է հանդիսանում։

«ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը՝ Սալվարդի հիմնական դպրոցը (հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, գյուղ Սալվարդ 3/12) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրաաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է։

Դպրոցը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային

կազմակերպությունների մասին», ՀՀ օրենքներով, այլ իրավական ակտերով և դպրոցի կանոնադրությամբ:
Դպրոցի կանոնադրությունը (նոր խմբագրությամբ) հաստատվել է մարզպետի 2017 թվականի օգոստոսի 30-ի N84-Ա որոշմամբ: ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Կապանի տարածքային գրանցվել է 2017 թվականի նոյեմբերի 16-ին: Գրանցման համար՝ 88.210.00756, ՀՎՀՀ՝ 09802982: Դպրոցի փոստային հասցեն է՝ 3512, էլեկտրոնային հասցեն՝ salvard@schools.am: ՀՀ Սյունիքի մարզի «Սալվարդի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը սեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման հիման վրա ՀՀ Սյունիքի մարզի Սալվարդի հիմնական 8-ամյա դպրոց հիմնարկի (հաշվառման թիվ 88.00.10. 23.10. 96թ. վկայական N Բ 000334) վերակազմավորման ձևով, վերակազմակերպման արդյունքում և փոխանցման ակտի համաձայն հանդիսանում է նրա իրավահաջորդը:

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (այսուհետ՝ հիմնադիր): Դպրոցը, որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

- Դպրոցը ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
- Դպրոցը ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են դպրոցի նախահաշիվը, ֆինանսական հաշվետվությունները, հաստիքացուցակը, հայտարարությունները, թափուր աշատատեղերը և այլն:
- Դպրոցի գործունեությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, նրա անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորմանը, ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստմանը:

## 3.2 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻՆ. ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Դպրոցի գործունեությունը համապատասխանում է մեր երկրի կրթական քաղաքականության միտումներին, գյուղի բնակիչների կարիքներին և հնարավորություններին։

Հաստատության լիարժեք գործունեության համար դպրոցը ձգտում է նպաստել սովորողի մոտ մարդասիրական, ազգային, համամարդկային արժեքների ձևավորմանը, սերմանել հայրենասիրություն, արժանապատվություն, պատասխանատվության հանդուրժողականություն, զարգացնել բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը։ Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

## 3.3 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻՆ ԵՎ ՆԵՐՈՒԺԻՆ

Դպրոցի գերխնդիրը, դա դպրոցի սեփական շենք ունենալն է։
Այդ հարցի լուծումը կհանգեցնի նյութատեխնիկական բազայի բարելավմանը.
Օրինակ՝ գրադարանը, լաբորատորիան, արհեստանոցը կտեղակայվեն դպրոցի նոր շենքում։
Դպրոցի տնտեսված միջոցներով և կամ այլ միջոցներով (դոնոր կազմակերպություններ, բարերարներ, կառավարությունից՝ մրցույթային կարգով ձեռնարկատիրական գործունեության ստացված ապրամքի իրացում, դրամաշնորհում) անհրաժեշտ նյութեր, պարագաներ, սարքեր ու այլ միջոցներ հայթայթելով կստեղծվի բարենպաստ ուսումնական միջավայր՝ կրթական գործընթացի կազմակերպման համար։

Դպրոցականները օգտվում են գյուղի բուժկետից, քանի որ այդպիսի հաստիք չունենք։

Ճաշարանի գործունեությունը արդյունավետ է ու նպատակային:
Հնարավորության դեպքում կարելի է (V-IX) դասարանի աշակերտներին նույնպես տալ տաք սնունդ:
Օրինակ՝ բնամթերքի դիմաց- հատկացնել ճաշ:
Ժամանակակից աշխարհը զարգանում է մեծ արագությամբ: Հանրակրթության բարեփոխման միտումները նպատակաուղղված են անձի գտելիքների ձեռքբերման, ներդրման և սերունդներին փոխանցման գործընթացով: Դպրոցի գործունեության մեջ որակյալ մասնագետների պահանջարկը դարձել է արդիական: Պակաս կարևոր չէ սովորողի ֆիզիկական միջավայրը դարձնել հարմարավետ, հետաքրքիր, հիգիենիկ և բովանդակալից: Եթե համապատասխան միջավայրի ստեղծման հարցում դպրոցը ունի բավականաչափ հնարավորություն, ապա այլ է պատկերը մասնագետ կադրերով դպրոցը համալրելու հարցը: Հաստատության 8 ուսուցիչներից 2-ը հիմնական աշխատակիցներ չեն, 2-ն էլ ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն, մեկ ուսուցիչ էլ սովորում է ԳՊՀ-ի III կուրսում (դասվար): Լուծումը կարելի է գտնել՝ համագործակցելով «Դասավանդիր Հայաստանում» կազմակերպության հետ կամ գործուղումով մասնագետ ներգրավելով:

## 4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

| N | Գործողություն | Կատար-ման ժամկետ (ուս. տարի) | Պատասխան ատու | Արդյունք | Նշում-ներ կատ. մասին |
|---|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | Քայլ 1. Հետամուտ լինել վկայականի ձեռքբերման գործում:<br>Քայլ 2. Գյուղի վարչական ղեկավարին դիմել ժողով անցկացնելու համար, ստանալ նվիրատվության համաձայնագիր:<br>Քայլ 3. ԿԳՄՍՆ – ից լիցենզիա ստանալ: | Տարվա ընթացքում<br>2023-2028 | Լիազոր մարմին գյուղի Վարչական ղեկավար Տնօրեն | Տարրական և հիմնական կրթության լիցենզիաների ձեռքբերում | |
| 2 | Քայլ 1. Դիմել «Դասավանդիր Հայաստանում» և համապատասխան մարմիններ մասնագետներ ներգրավվելու համար:<br>Քայլ 2. Լիազոր մարմնի միջնորդությամբ համապատասխան մասնագետ կադրերի ներգրավում (անվճար տեղերի պահանջագրով և կամ գործուղումով):<br>Քայլ 3. Շարունակելով հերթական ատեստավորման գործելաոճը հորդորել ուսուցիչներին՝ կամավոր ատեստավորման անցնելու համար: | 2023-2028<br>Տարվա ընթացքում<br>2023-2028 | Լիազոր մարմին Տնօրեն Ուսուցիչներ | Մանկավարժ ական համակազմի համալրումը որակավորվա ծ մասնագետնե րով | |
| 3 | Քայլ 1. Դիմել համապատասխան մարմիններին քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության առարկաների պատշաճ դասավանդման համար նյութեր և պարագաներ հայթհայթել:<br>Քայլ 2. Արհեստանոցի համար առաջին անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերում | 2023-2028<br>Տարվա | Լիազոր մարմին Տնօրեն Գրադարանա վար Զինղեկ | Ուսումնառութ յան համար արդյունավետ միջավայրի ստեղծում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Քայլ 3. Գրադարանի կահավորում<br>Քայլ 4. Զենքի պահեստի տեղակայում և ուսումնական զենքի ձեռքբերում: | ընթացքում | | | |
| 4 | 4. Քայլ 1. Այցելություն Սիսիանի պատմության թանգարան<br>Քայլ 2. Նշել պետական նշանակության (տոնական և հիշատակի) օրերը<br>Քայլ 3. Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում (օրինակ՝ Հ. Սահյանի տուն-թանգարան)<br>Քայլ 4. Զրույց՝ հուզող թեմաների շուրջ (թմրամիջոցներ, ծխախոտ) և պլակատի լույս ընծայում | 2023-2028<br><br><br><br><br><br><br><br><br><br>Տարվա ընթացքում | Տնօրեն<br>Դասղեկներ<br>Վարչական ղեկավար | Կրթադաստի արակչական աշխատանքնեի բարելավում (Էկոդաստիարակություն) | |
| 5 | Քայլ 1. Առնվազն կիսամյակը 2 անգամ հրավիրել համադպրոցական ծնողական ժողովներ՝ իրազեկելով առկա վիճակը, վերհանելով խնդիրները:<br>Քայլ 2. Գյուղի բուժքրոջը հրավիրել դպրոց (անհրաժեշտության դեպքում, ոչ պակաս ամիսը մեկ անգամ) սանիտարահիգիենիկ իրավիճակային և ընդհանուր բուժզննման նպատակով:<br>Քայլ 3. Գյուղի վարչական ղեկավարի հետ համագործակցելով՝ անցկացնել շաբաթօրյակ, ծառատունկ, կանաչապատում | 2023-2028<br><br><br><br><br><br>Տարվա ընթացքում | Տնօրեն<br>Վարչական ղեկավար<br>Գյուղի բուժքույր<br>Դասղեկներ | Համագործակցային կրթական միջավայրի ամրապնդում | |
| 6 | Քայլ 1. Շարունակել համագործակցել «Այբ» կրթական հիմնադրամի հետ՝ մասնակցելով «Մեղու» և «Կենգուրու» մրցույթներին:<br>Քայլ 2. Շարունակել մասնակցել ամենամյա շախմատի | Տարվա ընթացքում<br><br><br><br><br>2023-2028 | Տնօրեն<br>Մ/մ նախագահներ<br>Ուսուցիչներ | Աշակերտների ուսման առաջադիմության բարձրացում | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | առարկայական ներդպրոցական նաև անհրաժեշտության դեպքում տարածքային փուլի մրցույթին: Քայլ 3. Աշակերտների ակտիվ մասնակցության համադպրոցական մրցույթներին Քայլ 4. Դիմել մոտակա դպրոցի տնօրինությանը՝ միջդպրոցական մրցույթ կազմակերպելու և միացյալ թիմով անցկացվող սպորտլանդիային մասնակցելու համար: | | | | |
| 7 | Քայլ 1. Հորդորել ուսուցիչներին՝ ընտրել դասավանդման նոր մեթոդներ, ՏՀՏ –ի կիրառումով: Մոտիվացնելով աշակերտներին՝ պասիվ լսողից դառնալ ակտիվ կատարող: Քայլ 2. Համագործակցություն մենթոր դպրոցի հետ: Քայլ 3. Այցելություն կից զորամաս և քաղաք Սիսիանի զինվորական պանթեոն: Քայլ 4. Նախապես տեղյակ լինելով գնահատման տարբեր ձևերին (բնութագրական, ձևավորող)՝ այն կիրառել ըստ անհրաժեշտության: | 2023-2028<br><br>Տարվա ընթացքում | Տնօրեն Մ/մ նախագահներ Ուսուցիչներ Զինղեկ | Ուսուցման նոր մեթդների կիրառումով՝ կրթության որակի բարելավում | |
| 8 | Քայլ 1. Համակարգչային տեխնիկայի և հոլովակների համալրում: Քայլ 2. Ուսուցիչների մասնակցությունը մեդիագրագիտությանը ուղղված դասընթացներին: Քայլ 3. Համակարգչով կամ պրոյեկտրով դասապրոցեսը դարձնել գործելաոճ: Քայլ 4. Լրացուցիչ ճաշացանկի ներմուծում | 2023-2028<br><br>Տարվա ընթացքում | Տնօրեն Օպերատոր Ուսուցիչներ | ՏՀՏ-ի կիրառումը՝ որպես ժամանակակից ուսումնառության միջոց | |
| 9 | Քայլ 1. Սպորտդահլիճի առկայության դեպքում՝ մարզասարքերի ձեռքբերում: | 2023-2028 | Տնօրեն Ֆիզկուլտուրայի ուսուցիչ | Առողջ սննդի և անվտանգ կենսակերպի | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Քայլ 2. Ֆիզկուլտուրայի մասնագետի ներգրավում (հնարավորության դեպքում)։<br>Քայլ 3. Ծնողների ցանկության դեպքում՝ վճարովի սննդի կազմակերպում (V – VIII դաս. ) աշակերտների համար։<br>Քայլ 4. Ֆուտբոլի դաշտի համար դարպասների ձեռքբերում և տեղակայում | Տարվա ընթացքում | Խոհարար | ապահովում | |
| 10 | Քայլ 1. Լիազոր մարմնի աուդիտորի հայտնաբերած թերությունները անհապաղ վերացնել։<br>Քայլ 2. Խորհրդի կողմից սահմանած ներքին կարգապահական կանոնների պահպանումը դարձնել օրախնդիր հարց։<br>Քայլ 3. Ձեռք բերել և տեղադրել տեսասարքեր։<br>Քայլ 4. Խրախուսանքի կամ տույժի կիրառումը որպես կարգապահության ամրապնդման միջոց։ | 2023-2028<br><br>Տարվա ընթացքում | Լիազոր մարմին Խորհուրդ Տնօրեն | Թափանցիկ գործելաոճով և կարգապահ դրվածքով հաստատությ ուն ունենալը | |

# Կրթության մասնակիցները



# 5. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի պատասխանատուներն են՝ տնօրենը, մ/մ նախագահները, դասղեկները, ուսուցիչը, ուսուցչի օգնականը, գրադարանավարը, տնտեսվարը, որոնք համագործակցելով կառավարման լիազոր մարմինների և խորհրդական մարմինների հետ կազմակերպում են աշակերտական ուսումնադաստիարակչական աշխատանքներ: Վերը նշված յուրաքանչյուր մասնակից պետք է իր պատասխանատվության սահմանում աշխատի համաձայնեցված՝ լրացնելով միմյանց: Միայն այդ դեպքում արդյունքը կդառնա ակընհայտ, այսինքն կունենանք գիտելիքներով, կարողություններով և հմտություններով օժտված սովորող(մարդ), ով, ունենալով մտածելու կարողություն, իր գիտելիքը համադրելով, կարող է կիրառել առօրյա կյանքում՝ դառնալով հասարակության լիարժեք անդամ՝ անհատականություն: Անհրաժեշտության դեպքում հանրակրթության բարեփոխումների և դպրոցի գործունեության փոփոխությունների արդյունքում կարող են փոխվել պատասխանատուները: Այս հանգամանքը կարող է արտացոլվել միջնաժամկետ զարգացման ծրագրում (տարեկան կատարողական հաշվետվություն):

*Դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարի հատկանիշները.*



| N | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Ժամկետ | Պատասխանատու |
|---|---|---|---|---|
| Խնդիր 1 | Քայլ 1. Հետամուտ լինել վկայականի ձեռքբերմանը: Քայլ 2. Գյուղի վարչական ղեկավարին դիմել ժողով անցկացնելու համար, ստանալ նվիրատվության համաձայնագիր: | Տարրական և հիմնական լիցենզիայի ձեռքբերում | 2023-2024 | Լիազոր մարմին, տնօրեն, գյուղի վարչական ղեկավար |
| Խնդիր 2 | Քայլ 2. Լիազոր մարմնի միջնորդությամբ համապատասխան մասնագետ կադրերի ներգրավում (անվճար տեղերի պահանջագրով և կամ գործուղումով): | Մասնագետ կադրերի ավելացում | 2023-2026 | Լիազոր մարմին, տնօրեն, ուսուցիչներ |
| Խնդիր 3 | Քայլ 1. Դիմել համապատասխան մարմիններին քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության առարկաների պատշաճ դասավանդման համար նյութեր և պարագաներ հայթհայթել: | Բանագիտական առարկաների դասավանդումը դարձնել հագեցած | 2023-2028 | Լիազոր մարմին, տնօրեն, գրադարանավար, զինղեկ, համակարգող |
| Խնդիր 4 | Քայլ 2. Նշել պետական նշանակության (տոնական և հիշատակի) օրերը Քայլ 3. Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում (օրինակ՝ Հ. Սահյանի տուն-թանգարան) | Արտադպրոցական դաստիարակության բարելավում | 2023-2028 | Տնօրեն, դասղեկներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խնդիր 5 | Քայլ 1. Առնվազն կիսամյակը 2 անգամ հրավիրել համադպրոցական ծնողական ժողովներ՝ իրազեկելով առկա վիճակը, վերհանելով խնդիրները:<br>Քայլ 2. Գյուղի բուժքրոջը հրավիրել դպրոց (անհրաժեշտության դեպքում, ոչ պակաս ամիսը մեկ անգամ ) սանիտարահիգիենիկ իրավիճակային և ընդհանուր բուժզննման նպատակով:<br>Քայլ 3. Գյուղի վարչական ղեկավարի հետ համագործակցելով՝ անցկացնել շաբաթօրյակ, ծառատունկ, կանաչապատում | Համագործակցային կրթական միջավայրի ամրապնդում | 2023-2028 | Տնօրեն, գյուղի բուժքույր, վարչական ղեկավար դասղեկներ |
| Խնդիր 6 | Քայլ 1. Շարունակել համագործակցել «Այբ» կրթական հիմնադրամի հետ՝ մասնակցելով «Մեղու» և «Կենգուրու» մրցույթներին:<br>Քայլ 2. Շարունակել մասնակցել ամենամյա շախմատի առարկայական ներդպրոցական նաև անհրաժեշտության դեպքում տարածքային փուլի մրցույթին:<br>Քայլ 3. Աշակերտների ակտիվ մասնակցության համադպրոցական մրցույթներին | Մրցունակ աշակերտի ձևավորում | 2023-2028 | Տնօրեն, մ/մ նախագահներն ուսուցիչներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Խնդիր 7 | Քայլ 1. Հորդորել ուսուցիչներին՝ ընտրել դասավանդման նոր մեթոդներ, ՏՀՏ – ի կիրառումով: Մոտիվացնելով աշակերտներին՝ պասիվ լսողից դառնալ ակտիվ կատարող:<br>Քայլ 2. Համագործակցություն մենթոր դպրոցի հետ:<br>Քայլ 3. Այցելություն կից զորամաս և քաղաք Սիսիանի զինվորական պանթեոն: | Նոր մեթոդներով կրթության որակի բարելավում | 2023-2028 | Լիազոր մարմին, տնօրեն, ուսուցիչներ, համակարգող |
| Խնդիր 8 | Քայլ 2. Ուսուցիչների մասնակցությունը մեդիագրագիտությանը ուղղված դասընթացներին: | ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում | 2023-2026 | Տնօրեն, օպերատոր, ուսուցիչներ |
| Խնդիր 9 | Քայլ 3. Ծնողների ցանկության դեպքում՝ վճարովի սննդի կազմակերպում (V – VIII դաս. ) աշակերտների համար: | Առողջ ապրելակերպի տարածում | 2023-2028 | Տնօրեն, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, խոհարար |
| Խնդիր 10 | Քայլ 1. Լիազոր մարմնի աուդիտորի հայտնաբերած թերությունները անհապաղ վերացնել:<br>Քայլ 4. Խրախուսանքի կամ տույժի կիրառումը որպես կարգապահության ամրապնդման միջոց: | Վերահսկողության և կարգապահության ամրապնդում | 2023-2028 | Լիազոր մարմին, միացյալ խորհուրդ, տնօրեն |

# 6. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորված և իրականացված արդյունքների համադրման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ ծառայում են յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականությունները:

Կրթական ցուցանիշները վիճակագրական այն տվյալներն են, որոնք թույլ են տալիս ինչպես տեղեկություն ստանալ կրթության ընթացիկ վիճակի մասին, այնպես էլ գնահատել դպրոցի արտաքին և ներքին արդյունավետությունը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է, որի մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների բարձրացմանը:

Ծրագրի արդյունքների գնահատումը՝ դպրոցի գործունեության գնահատման մեխանիզը նախատեսված է և կարգավորում է «Հանրակրթության մասին» օրենքով:

Յուրաքանչյուր իրականացված գործողություն չափելի է դարձնում ակնկալվող արդյունքը:

ԴԶԾ-ն մշակելիս հիմք են ընդունվում դպրոցի կրթական, ֆինանսատնտեսական և այլ ցուցանիշները: Կրթական ցուցանիշները վիճակագրական այն տվյալներ են, որոնք թույլ են տալիս ինչպես տեղեկություն ստանալ կրթության ընթացիկ վիճակի մասին, այնպես էլ վերահսկել ուսումնական հաստատության արտաքին և ներքին արդյունավետությունը: Ցուցանիշները վիճակագրական պարզ տվյալներ չեն, այլ կրում են որոշակի ածանցյալ տեղեկույթ:

Դպրոցի կրթական և այլ ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար: Կրթական ցուցանիշները նաև գործիքներն են, որոնց օգնությամբ կարելի է հետևել դպրոցում իրականացվող կրթա-

դաստարակչական բոլոր գործընթացներին, եթե դրանք հաշվարկվում են որոշակի կանոնակարգված պարբերականությամբ:

Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Կրթական ցուցանիշների միջոցով հնարավոր չէ դատել, մեկնաբանել, գնահատել առանձին գործընթացներ, քանի որ դրանք ընդհանուր դիտարկումներ են, որոնք պարփակում են ընդհանուր եզրահանգումներ դպրոցի կամ նույնիսկ դասարանի մակարդակով: Սակայն ընդհանուր օրինաչափությունից դուրս մնացած առանձնահատուկ ցուցանիշները նույնպես կարևոր են և պետք է արտացոլվեն ԴԶԾ-ի իրականացման գործողություններում:

Դպրոցի կրթական ցուցանիշները պետք է անպայման ունենան առնվազն մեկ համեմատման կետ: Օրինակ՝ <<Հայոց լեզու>> առարկայից սովորողների ուսումնական առաջադիմության ցուցանիշները համեմատելիս պետք է ունենալ տվյալ դասարանի սովորողների ընթացիկ ներքին և արտաքին գնահատման արդյունքները և համեմատել միմյանց հետ նախնական և տվյալ պահին առկա արդյունքները: Միևնույն բարդության ծրագրային նյութի յուրացման միջին գնահատականի աճի դինամիկայի դեպքում կունենանք այդ ուղղությամբ ԴԶԾ-ում սահմանված խնդիրների լուծման արդյունավետ միջոցառումներ:

Նմանատիպ տվյալների հավաքագրումը, ամփոփումը և հրապարակումը դպրոցում կրթության որակի հետևողական բարելավման յուրահատուկ մշակույթի բաղադրիչ է: Այդ տվյալների մեկնաբանությունը թույլ է տալիս առարկայական դարձնել ինչպես դպրոցի զարգացման խնդիրների քննարկումը, նաև ձևավորում է գնահատման նոր որակական կուլտուրա:

Գոյություն ունի դպրոցի կրթական ցուցանիշների երկու հիմնական տեսակ՝ պարզ և բարդ (գործունեության ցուցանիշներ):

**Պարզ ցուցանիշները** հաճախ անվանում են նաև բնութագրիչներ: Դրանք բացահայտում և բնութագրում են դպրոցի գործունեության միայն մեկ բաղադրիչը տվյալ պահին կամ որոշակի ընտրված ժամանակահատվածում: Դրանք պարզ չափումներ են, որոնք արտահայտվում են թվերով կամ տոկոսներով:

Պարզ ցուցանիշները սովորաբար չեն ներկայացնում դպրոցի գործունեության որակական պատկերը: Բայց դրանք շատ օգտակար են դպրոցի քանակական գնահատումների և կանխորոշումների համար:

Դպրոցի գործունեությունը հասկանալու, դրա արդյունավետությունը գնահատելու համար անհրաժեշտ են նրա գործառնությունը, այսինքն՝ դպրոցում տեղի ունեցող գործընթացները, փոփոխությունները չափող ցուցանիշներ:

**Գործունեության (բարդ) ցուցանիշները** արտահայտում են կրթական համակարգի մեկ բաղադրիչի փոխհարաբերությունը մեկ այլ բաղադրիչի նկատմամբ: Գործունեության (բարդ) ցուցանիշները հաշվարկվում են առնվազն երկու տիպի պարզ ցուցանիշների համադրումից: Գործունեության ցուցանիշները ցույց են տալիս առկա միջոցների և ստացվող արդյունքների կամ առկա միջոցների և կատարվող գործընթացների միջև կապը:

Գործունեության ցուցանիշները հաշվարկվում են համապատասխան տվյալների առկայության դեպքում, վերջիններիս հավաքագրումից և ամփոփումից հետո:

Սովորաբար մեկից ավելի փոփոխական պարունակող ցուցանիշները անվանում են նաև բարդ ցուցանիշներ:

Ցուցանիշների չափելիության գլխավոր հատկանիշը այն է, որ ցանկացած ցուցանիշ միշտ ենթակա է քանակական չափման՝ ճշգրիտ մաթեմատիկական հաշվարկի, որի արդյունքում պետք է ստացվի թիվ  կամ տոկոս: Ցանկացած ցուցանիշ ունի հաշվարկման իր ձևը, կանոնը կամ բանաձևը:

Գոյություն ունեն ուղղակի և ոչ ուղղակի ցուցանիշներ: Ոչ ուղղակի ցուցանիշները վերաբերում են այնպիսի գործոնների, որոնք ուղղակիորեն կապված չեն դպրոցի հետ, բայց անուղղակիորեն ազդում են ուսումնական գործընթացի վրա: Դրանք են սոցիալական և տնտեսական գործոնները, օրինակ՝ ուսուցիչների և աշակերտների համար բժշկական ծառայությունների մատչելիությունը,  լավ ճանապարհների առկայությունը, տրանսպորտային միջոցների առկայությունը, դպրոցի հեռավորությունը տնից և այլն:

Ինչպես նշեցինք, չնայած ցուցանիշները բնութագրում և արտահայտում են իրավիճակը ժամանակի տվյալ պահին, սակայն հիմնականում դրանք հաշվարկվում են որոշակի պարբերականությամբ, օրինակ՝ յուրաքանչյուր տարին մեկ անգամ կամ կիսամյակը մեկ անգամ, հինգը տարին մեկ անգամ:

Միայն միևնույն տվյալների հավաքագրումը և դրանց հիման վրա նույն ցուցանիշի կրկնակի, եռակի, բազմակի ստացումը որոշակի պարբերականությամբ թույլ է տալիս վերահսկել կրթական համակարգի որոշակի բաղադրիչներում տեղի ունեցող գործընթացները, հետևել դրանց:

Բացի այդ, ժամանակի ընթացքում պարբերաբար վերահաշվարկվող ցուցանիշը կարող է համեմատվել համակարգը նկարագրող այլ ցուցանիշի հետ:

ԴԶԾ-ում ցուցանիշները պետք է՝

1. լինեն համադրելի,
2. լինեն չափելի,
3. լինեն հասկանալի բոլորին,

## 7. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ռիսկեր**
1.1 Շենքի վկայականի ձեռքբերման անհարկի ձգձգում
1.2 Շենքի սեփականատերերի (բնակիչների) անհամաձայնություն՝ նվիրատվության իրականացման գործում:
1.3 Խոշորացման ծրագրով (մինչև 2026) դպրոցի վերամիավորման իրագործումը (միացումը Հացավան գյուղի դպրոցին):
2. Մասնագետ մանկավարժների մոտիվացիայի պակասը՝ աշխատելու հեռավոր գյուղում, առանց արտոնյալ պայմանների:
3. Անհրաժեշտ նյութերի,պարագաների, սարքավորումների ձեռքբերման խոչընդոտներ:
4. Խմբակների և կամ երկարօրյա դասընթացի կազմակերպման խոչընդոտ՝կապված աշակերտների սակավությամբ, համապատասխան մանկավարժ չունենալու հանգամանքով:
5. Դպրոցի գործունեության վերաբերյալ գյուղի բնակիչների մոտ ձևավորված կարծրատիպեր:

**Ռիսկերը մեղմացնող գործողություններ**.
1.1 Հետամուտ լինել (դիմել կադաստրի կոմիտե) վկայականի ձեռքբերում:
1.2 Բարձր պահելով դպրոցի վարկանիշը՝ բնակիչների մոտ համոզմունք ձևավորել դպրոցի շենք ունենալու կարևորության մասին:
1.3 Կազմակերպել ստորագրահավաք և բաց նամակով դիմել կառավարությանը:
2. Ուսուցիչների թափուր տեղերի համալրման նպատակով դիմել համապատասխան մարմիններ՝ գործուղումով կամ մասնագետներ ուղարկելու համար՝ առաջարկելով նպաստավոր պայմաններ:
3. Շահագրգիռ կազմակերպությունների ներկայացնել նախագիծ-ծրագիր: Խնդիրը ներկայացնել մարզպետարան և ԿԳՄՍՆ:
4. Ճիշտ խմբակավար ընտրելով՝ ապահովել աշակերտների ներգրավածության առավելագույն քանակ:
5. Ակտիվացնել ծնող-դպրոց կապը՝ հրավիրելով ծնողներին դասալսումների և կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին ակտիվ մասնակցելու համար:

Դպրոցն ունի ԿԳՄՍՆ կողմից հաստատված պարտադիր գործունեության գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը;

1. Դպրոցի խորհրդի արձանագրությունների մատյան
2. Մանկավարժական խորհրդի արձանագրությունների մատյան
3. Աշակերտական խորհրդի արձանագրությունների մատյան
4. Ծնողական խորհրդի արձանագրությունների մատյան
5. Առարկայական մեթոդական միավորումների արձանագրությունների մատյան
6. Տարիֆիկացիոն մատյան
7. Ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան
8. Աշակերտի շարժի մատյան
9. Վկայականների բաշխման մատյան
10. Աշխատողների հրամանագիրք և հրամանների գրանցամատյան
11. Աշխատողների անձնական գործ
12. Աշակերտների հրամանագիրք և հրամանների գրանցամատյան
13.http://emis.am/ ԴԿՏՀ, դպրոցի տվյալների մուտքագրման էլ. կայք
14. http://matjan.emis.am/ էլեկտրոնային մատյանի կայք
15. http://crm.dshh.am/ դասագրքերի և ՏՀՏ շրջանառու հիմնադրամի կայք։

# 8. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

## 8.1

| N | ԽՆԴԻՐ | ՊԱՏԱՍԽԱ-ՆԱՏՈՒ | ԺԱՄԱՆԱ-ԿԱՑՈՒՅՑ (ուս. տարի) | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱ-ԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոցի շենքի վկայականի ձեռքբերում և նվիրատվության և նվիրատվության կարգով՝ սեփական շենքի ամրագրում՝ լիցենզիա ստանալու նպատակով | Լիազոր մարմին, տնօրեն, գյուղի վարչական ղեկավար | 2023-2024 | Դպրոցի բյուջե |
| 2 | Մասնակցել առցանց վերապատրաստումներին: Մշտական համագործակցություն ապահովել կրթություն կազմակերպող և իրականացնող բոլոր հնարավոր  կառույցների հետ | Լիազոր մարմին, տնօրեն, ուսուցիչներ | 2023-2026 | Դպրոցի բյուջե, պետ. բյուջե |
| 3 | Լաբորատորիայի և արհեստանոցի անհրաժեշտ միջոցների ձեռքբերում | Լիազոր մարմին, տնօրեն, գրադարանավար, զինղեկ | 2023-2028 | Նյութեր և սարքավորումներ քիմիայի և ֆիզիկայի փորձերի համար, հաստոց, գրադարակներ, ուսումնական զենք |
| 4 | Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործում | Տնօրեն, դասղեկներ | 2023-2028 | Անվճար տոմսեր պետ. բյուջեից, սեփական միջոցներ |
| 5 | Խորհրդակցական մարմինների ակտիվացում<br>Դպրոց – ընտանիք – համայնք փոխգործակցության ներդաշնակության ապահովում | Տնօրեն, գյուղի բուժքույր, վարչական ղեկավար դասղեկներ | 2023-2028 | Համայնքային բյուջե, տնկիներ |
| 6 | Բոլոր օլիմպիադաներին, մրցույթներին, կազմակերպվող սպորտային առաջնություններին ունենալ | Տնօրեն, մ/մ նախագահներն ուսուցիչներ | 2023-2028 | Սեփական միջոցներ, բարերար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | առնվազն մասնակցություն | | | |
| 7 | Բոլորի ասելիքը լսելի դարձնել, կայացնել թիմային որոշումներ, ապահովել կապը կրթական կազմակերպությունների հետ | Լիազոր մարմին, տնօրեն, ուսուցիչներ | 2023-2028 | Սեփական միջոցներ, բարերար |
| 8 | Զարգացնել ուսուցչի համակարգչային գրագիտությունը: ՏՀՏ – ի կիրառման կարողությունների ամրապնդում | Տնօրեն, օպերատոր, ուսուցիչներ | 2023-2026 | Դպրոցի միջոցներ |
| 9 | Սպորտդահլիճ ունենալը (ֆիզկուլտուրա առարկայի դրվածքի բարձրացում) և ճաշարանի լրացուցիչ ճաշացանկի ներմուծում | Տնօրեն, ֆիզկուլտուրայի ուսուցիչ, խոհարար | 2023-2028 | Դպրոցի միջոցներ, ծնողների միջոցներ, ճաշարանի պասք և գույք, ֆուտբոլի դարպասներ, |
| 10 | Կառավարման մարմինների հետ սերտ աշխատանք և կարգապահության ամրապնդում | Լիազոր մարմին, միացյալ խորհուրդ, տնօրեն | 2023-2028 | Պետ. բյուջե,դպրոցի միջոցներ, տեսահսկման համակարգի սարքեր |

## 8.2 Զարգացման ծրագրում մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին

ԶԾ-ի իրականացման համար նախատեսվում է ունենալ հայեցակարգ՝ ըստ որի նյութական միջոցների պլանավորումը յուրաքանչյուր գործողության համար ըստ տարիների կբերի ակնկալվող արդյունքի:

Ծրագրի կատարման հաջողությունը բխում է նրա դրույթների կատարման առաջնահերթությունից: Այստեղ տեղին է մեջբերել հետևյալ խոսույթը՝ ի՞նչ անել, ինչպե՞ս անել և ե՞րբ անել:

Եթե տնօրենը իր աշխատանքը կազմակերպում է ելնելով վերը նշված խոսույթից, ապա ծրագրի իրականացումը դառնում է պլանավորված և գործողությունները բաշխվում են հավասարաչափ ծանրաբեռնվածությամբ:

Տեղին է նշել, որ նոր չափորոշիչով յուրաքանչյուր գործողության կատարման համար պատասխանատու դառնում է համակարգողը (տնտեսական մաս): Այս պարագայում տնօրենի գործառույթը կլինի վերահսկել և ապահովել թափանցիկ գործելաոճ՝ տարեկան

կատարողականը ներկայացնել ու միացյալ խորհրդի դատին:

Միջոցների համաչափ օգտագործումը հանգեցնում է դպրոցի ուսումնական միջավայրի աստիճանական բարելավմանը, որն էլ անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է կրթության որակի բարձրացման գործում:

Օրինակ՝ եթե քիմիայի գործնական պարապմունքի դասաժամը ցանկանում ենք ծառայեցնել նպատակին, պետք է փորձի միջոցով համոզել աշակերտին, որ գիտելիքի կիրառումը կյանքումը դա հենց կարողունակություն է, որին միտված է կրթության ակնկալիքը. . .

Դպրոցի բյուջեի տարեկան նախահաշվում՝ ԴԶԾ-ի տվյալ տարվա ֆինանսական միջոցները և ծախսման ուղղությունները ճիշտ տեղաբաշխելով դպրոցը մտադիր է յուրաքանչյուր տարում հասնել որոշակի վերջնարդյունքի:

## 9. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

9. 1 Յուրաքանչյուր գործողության համար նախատեսվող վերահսկողության մեխանիզմներ

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրապետության ու որոշ կարգավորող օրենսդրության համաձայն:
Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը՝ հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:
Հաստատության հաշվետվությունները հասանելի են լինում դպրոցի շահառուներին՝ պետական լիազորված մարմիններ, դպրոցի աշխատակազմ, սովորողներ, համայնք:
Աշխատանքների կատարման վերահսկողությունը իրականացվում է դպրոցի կառավարման, մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից:
Ծրագրի իրատեսության ու նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը:
Դպրոցի ընթացիկ վերահսկողությունը իրականացնել ով՝ միացիալ խորհուրդը ավելի շատ նպաստում է դպրոցի հաշվետվողականության և ունենում է խորհրդատվական բնույթ: Նիստերը տեղի է ունենում երրեք ամսից ոչ շուտ և հիմնականում կրում են ֆորմալ բնույթ:
միացիալ խորհուրդի դերը մեծանում է դպրոցի միջնաժամկետ ծրագրի կատարողականի, ինչպես նաև տարիֆիկացիոն ցուցակների քննարկումների ժամանակ:
Այլ է պատկերը լիազոր մարմնի կողմից դպրոցի ընթացիկ կառավարումը ( վերահսկումը ) իրականացնել իս, քանի որ « հարկադրանքի » միջոցները ստիպում են դպրոցին կիրառել սթափ գործելաոճ , այն է. յուրաքանչյուր «լումա» ինքնանպատակ չծախսել : Միջոցների վերահսկման համար կան մշակված մեխանիզմներ, հստակ ժամանակացույցեր :
Լիազոր մարմինը հանդիսանալով յուրահատուկ «միջնորդ» կառավարության և դպրոցի միջև վերը նշված գործիքների միջոցով ձգտում է հիմնադիրի կողմից հատկացված դրամը ետվերադարձնել իրեն՝ պետության կարիքի բավարարման տեսքով:
Դպրոցի խորհրդի կողմից ԴԶԾ-ի իրականացման վերահսկողության գործընթացը ոչ թե նպատակ ունի իրացնելու դպրոցի կառավարման այդ մարմնի ֆորմալ իրավունքը, այլ իրականում դպրոցի խորհուրդը իր խորհրդատվական աջակցությամբ, դպրոցի ֆինանսական ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով պետք է աջակցի տնօրենին ԴԶԾ-ի իրականացման փուլում իր իսկ կողմից սահմանած նպատակադրումներում: ԶԴԾ-ի իրականացման վերահսողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա այդ ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան

աշխատանքային պլանների կատարողականներն են: Դրա համար անհրաժեշտ է ԴԶԾ-ի նպատակադրումները ամբողջությամբ արտացոլել դպրոցի տարեկան աշխատանքային պլաններում